





# ՆՇԱՆԱԿՈՐ ԳՅՈՒՏԱՐԱՐ-ԳԻՏՆԱԿԱՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Նշենք մի քանի հանրահռչակ գիտնականների և գյուտարարների անուններ, որոնք մեծ ավանդ ունեն տեխնիկայի զարգացման գործում:

1784 թ. անգլիացի **Ջեմս Ուատտ** ստեղծել է առաջին շոգեմեքենան, իսկ նրա հայրենակից **Ջորջ Ստեֆենսոնը**՝ 1816 թ. առաջին կատարելագործված շոգեքարշը:




Ջեմս Ուատտ (1736–1819)




Ջորջ Ստեֆենսոն (1781–1848)

1834 թ. ռուս գիտնական **Բորիս Յակոբին** ստեղծել է առաջին էլեկտրաշարժիչը:





Բորիս Յակոբի (1801–1874)

Բազմաթիվ գյուտերի հեղինակ է ամերիկացի գյուտարար **Թոմաս Էդիսոնը**: Նա է հայտնագործել ձայնի մեխանիկական գրանցման սարքը, կատարելագործել շիկայման լամպը, ստեղծել հզոր էլեկտրական գեներատորներ և շատ ուրիշ սարքավորումներ: Միայն լուսավորության համար պիտանի էլեկտրական լամպ ստեղծելու նպատակով կատարել է հազարից ավելի փորձ: ԱՄՆ-ում նա իր գյուտերի համար ստացել է 1098 արտոնագիր:




Թոմաս Էդիսոն (1847–1931)

Գերմանացի գյուտարար **Ռուդոլֆ Դիզելը** 1893 թ. ստեղծել է դիզելային շարժիչը:



Թոմաս Էդիսոն (1847–1931)

Ռուս գյուտարար **Կոնստանտին Յիոլկովսկին**, ուսումնասիրելով ռեակտիվ շարժման օրենքները, մշակել է թռչող սարքի՝ հրթիռի նախագիծ՝ Երկրից դեպի Արեգակնային համակարգի մյուս մոլորակները թռչելու համար:



Կոնստանտին Յիոլկովսկի (1857–1935)

Մեծ է ամերիկացի ինժեներ, ֆիզիկոս և գյուտարար Նիկոլա Տեսլայի դերը էլեկտրատեխնիկայի և ռադիոտեխնիկայի բնագավառներում: Նա ստացել է արտոնագրեր (արտոնագիրը փաստաթուղթ է, որով հաստատվում է գյուտարարի բացառիկ իրավունքն իր գյուտի վերաբերմամբ) բազմաթիվ էլեկտրական մեքենաների և բազմաթիվ փոփոխական հոսանքի, ինչպես նաև տեխնիկայի տարբեր բնագավառներում կատարած բազմաթիվ գյուտերի համար (շոգեգեներատորային տատանակ, էլեկտրական հաշվիչ, հաճախաչափ և այլն):



Նիկոլա Տեսլա (1856–1943)

Բազմաթիվ գյուտերի հեղինակ է հայ ինժեներ Հովհաննես Ադամյանը: Մեծ է նրա ավանդը հեռուստատեսության զարգացման ոլորտում: Նա է գունավոր հեռուստատեսության և լուսահեռագրության գյուտերի հեղինակը: 1925 թ. Հ. Ադամյանը Երևանի պետական համալսարանում ցուցադրել է, թե հեռուստատեսությամբ ինչպես են հաղորդում գունավոր պատկերներ: Հ. Ադամյանի առաջարկած սկզբունքով գունավոր հեռուստահաղորդումներ հեռարձակվել են 1928 թ. Լոնդոնում:



Հովհաննես Ադամյան (1879–1932)